**Համապատասխանության չափանիշներ.** **Այո / Ոչ**

ՀՄՆ ծրագրով ֆինանսավորվում են միայն հիմնական ենթածրագրից դուրս գտնվող ենթակառուցվածքները (ճանապարհ, ջրի, կոյուղու, էներգամատակարարման և այլ հարակից ենթակառուցվածքներ): Այն չի նպաստում մասնավոր հատվածի ֆինանսավորմանը կամ բաժնեմասի տրամադրմանը:

Հանրային ենթակառուցվածքը տրամադրվում է մինչև մասնավոր գույքի սահմանը: Մասնավոր սեփականության մեջ որևէ միջամտություն չի հաստատվի:

Ներդրումների ծավալը նշելիս, հայտատուն պետք է պատրաստակամ լինի վկայություն ներկայացնելու իր ֆինանսական պատրաստվածության մասին ծրագրի իրականացման հաջորդ փուլերում՝ առաջարկի ներկայացման և գնահատման գործընթացում: Մասնավորապես, փաստաթղթեր այն մասին, թե արդյոք ներդրողն ունի անհրաժեշտ կապիտալ կամ վարկ է ձեռքբերել որևէ առևտրային բանկից:

(**Հիմնադրամը կապահովի մասնավոր անձի ներկայացրած ֆինանսական տեղեկատվության գաղտնիությունը և անհասանելիությունը**)

Այն դեպքում, մասնավոր ներդրողը նորաստեղծ գործարար է, նա պարտավոր է ցույց տալ իր բարի համբավը, կառավարման փորձը և ներդրողի / ընկերության ֆինանսական առողջությանը, թեև դա կարող է լինել այլ ոլորտում ձեռք բերած փորձառություն

Գերակա գործարար ուղղություններն են զբոսաշրջությունը և ագրոբիզնեսը: Այս ոլորտների որևէ ենթախմբին չհամապատասխանող առաջարկները չեն կարող համապատասխանող լինել այս ՀՄՆ ծրագրի համար

Հողատարածքը/տարածքը, որտեղ ներդրումային առաջարկ է ներկայացվել, պետք է մասնավոր սեփականություն լինի կամ տևական ժամկետով վարձակալված լինի հենց այդ նպատակով

Մասնավոր ներդրումների ինքնաֆինանսավորվող մասի հարաբերակցությունը կառավարությունից/ թե ՏՏԵՁ-ի միջոցներից ակնկալվող մասին պետք է լինի առնվազն (4:1)

Ներդրումների հետևյալ տեսակներն արգելված են.

- ներդրումներ պահպանվող տարածքներում, մշակութային ժառանգության հուշարձանների ընդհանուր կամ անհատական պաշտպանության գոտիներում,
- նուրբ (փխրուն) էկոհամակարգերի վրա ազդող գործունեություն,
- կարևոր բնակավայրերում և ականավոր գեղագիտական արժեք ունեցող կանաչ-ոլորտներում,
- անտառների, ջրատարածքների և ալպյան/ենթալպյան մարգագետինների փոխակերպում պահանջող գործունեություն, և
- ծանր աղտոտող արդյունաբերություն:

Տնօրենի անուն, ազգանուն _____
Ստորագրություն _____